



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

### ՓԱՍՏԱԲԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ ՄՇԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 8-րդ պարբերության և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 17.3 կետի 22-րդ ենթակետի պահանջները,

հաշվի առնելով Փաստաբանի վարքագծի կանոնագրքի բարեփոխման անհրաժեշտությունը,

նկատի ունենալով ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ հրավիրված ԱՄՆ փորձագետների առաջարկները Փաստաբանի վարքագծի կանոնագրքի բարեփոխումների վերաբերյալ,

ի գիտություն ընդունելով ստորև նշված փաստաբանների համաձայնությունը,

#### Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Ձևավորել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծ մշակող աշխատանքային խումբ (**այսուհետ՝ Աշխատանքային խումբ**)՝ փաստաբանների հետևյալ կազմով.

- 1) Էմիլ Ամիրխանյան (համակարգող),
- 2) Սիմոն Բաբայան,
- 3) Սեդրակ Ասատրյան,
- 4) Արտաշես Խալաթյան,
- 5) Լյուդվիկ Դավթյան,
- 6) Մարտուն Փանոսյան,
- 7) Մանե Կարապետյան:

2. Աշխատանքային խմբին առաջարկել երեք ամսվա ընթացքում ներկայացնել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծ:

3. Նախագիծը մշակելուց հետո ներկայացնել փաստաբաններին՝ դիտողությունների, առաջարկությունների և կարծիքների համար:

4. Ընդունել ի գիտություն, որ Աշխատանքային խումբը գործելու է հասարակական հիմունքներով:

5. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել հասցեատերերին:

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

08 փետրվարի 2019թ.  
թիվ 33-Ա  
ք.Երևան